

ԻՆՏԵՐՈՒՄ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանց նմանություն մեջ:

Փոստատարարացիք չիմում են ազգական
Тифлис. Редакция «Маск»

Խմորագրատուր ըստ է՝ առաջ օտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տոն օրերից)

Յայտարարութիւն ըն առնում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւարանչար ըստին 2 կոպեկ:

ՄԱՍԿ

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թ. ի ն

(ՏԵՍՆԵՐՈՒՄ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամայով ԱՄՆՆ ՕՐ (բացի տոն և տոներին հետևող օրերից):

ՊՐՈԳՐԱՄԱՒԱՐ. I. Տեղութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետոն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ:

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 ռուբլ, կես տարվան 6 ռ., հինգ ամս. 5 ռ., չորս ամս. 4 ռ., երեք ամս. 3 ռ. երկու ամս. 2 ռ. և մի ամս. 1 ռուբլ:

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետևել հասցեով. Тифлис, редакция «Маск».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ զանազանութիւն. — Ներքին տեսութիւն. Նամակ Եւրոպայից, Նամակ Բաղդադից, Նամակ Դուբնայից, Նամակ Խաղաղութիւնից, Նամակ Լուրերից: — Արտաքին տեսութիւն. Երկրաշարժ Աւստրալիայում: Գլխաւոր տոնի ձառը: Ապստամբութիւն Բրիտանիայում: Յաշտապում: — Վշակի: — Հեռագիրներ: — Յայտարարութիւններ:

ԻՆՉ ԶԱՆԱԶԱՆՈՒԹԻՒՆ

II

Տիրապետող եկեղեցին մի երկրի մէջ համարում է իրան միակ եկեղեցական կազմակերպութիւն, որ արտօնութիւն ունի կրօնի ճշմարտութիւնը քարոզել ժողովրդին: Միւս կրօնների քարոզութիւնները ճշմարտութիւն չեն նրա կարծիքով: Բաղաքականապէս անկախ երկիրներում տիրապետող, այսինքն մեծամասնութեան եկեղեցին, շատ անգամ ձեռք է բերում քաղաքական այլ և այլ արտօնութիւններ: Նա իրաւունք է ստանում քաղաքական ներգործութիւն ունենալ և երկրի այլ եկեղեցիների վրա, այն մարդը որ պետական եկեղեցուն չէ պատկանում, պատկերելով մի կնոջ հետ, որ պետական եկեղեցուն է պատկանում, պէտք է մղրտի իր զաւակները պետական կրօնի մէջ, պետական եկեղեցուն չը պատկանողը մի քանի երկիրներում չէ վայելում նոյն քաղաքական իրաւունքներ, որոնց վայելում է պետական եկեղեցուն պատկանողը և այլն:

Բաղաքական անկախութիւն չունեցող ազգերի մէջ, տիրապետող մեծամասնութեանը պատկանող եկեղեցին չէ կարող, ի

հարկէ, պետական եկեղեցի կոչվել և նոյն իրաւունքներ ունենալ ինչ ունի պետական եկեղեցին, բայց նա դարձեալ միշտ ձգտում ունի բռնանալ նոյն ազգի մէջ եղած միւս դաւանութիւնների վրա: Ազգակիցներին, որոնք պատկանում են այլ դաւանութիւններին, տիրապետող եկեղեցին յայտնում է ազգութենից դուրս և միայն նրանց է համարում ազգի անդամներ, որոնք իր դաւանած կրօնին են պատկանում:

Տիրապետող եկեղեցին չունի քաղաքական իրաւունքներ, բայց իր նեղ շրջանում նա նոյն է անում, ինչ որ անում է պետական ճանաչված եկեղեցին մի քաղաքականապէս անկախ երկրի մէջ, տիրապետող եկեղեցին միջոց չունի իրան պետական յայտնել յայտնում է իրան միակ ազգային եկեղեցի և չէ թոյլ տալիս որ ազգի մէջ եղած այլ եկեղեցիներին պատկանող անհատները մասնակցեն որ և է ազգային գործերում, տեսուչ, հոգաբարձու կամ ուսուցիչ լինեն ազգային դպրոցներում, չէ թոյլ տալիս, որ ազգին պատկանող այլակրօն զաւակները որպէս աշակերտներ ընդունվեն ազգային դպրոցներում:

Եթէ այսօր հայոց լուսաւորչական եկեղեցին, որ պետական եկեղեցի չէ հայերի մէջ, այդպէս է վարվում այլակրօն հայերի հետ, այդպէս է վարվում հայոց միւս եկեղեցիների, կաթօլիկ և բողոքական հայոց եկեղեցիների հետ, — ուրեմն որքան աւելի բռնաւոր կերպով կը վարվէր նա վաղը, եթէ թիւրքաց Հայաստանը ինք-

նավարութիւն ստանար և լուսաւորչական եկեղեցին, հայերի մեծամասնութեան եկեղեցի լինելով, կը սկսէր իրան ոչ թէ միայն տիրապետող, բայց և պետական եկեղեցի համարել թիւրքաց Հայաստանում: Նա նոյն բացառական արտօնութիւններ ձեռք կը գցէր, ինչ որ ձեռք են գցում առհասարակ ամեն պետական եկեղեցիներ, ի փաստ, ի հարկէ ազգային միւս եկեղեցիների ազատութեան:

Եթէ փառանքին առաջն առնելու համար, հարկաւոր է որ մեր այլակրօն, մանաւանդ թիւրքաւորացի եղբայրները առաջնուց պատրաստվեն, առաջնուց հասկանան թէ ինչ է նշանակում տիրապետող կամ պետական եկեղեցի և ինչ է նշանակում ազգային եկեղեցի:

Հայ-կաթօլիկները և հայ-աւետարանականները նոյնքան իրաւունք ունեն կազմակերպել և հաստատել իրանց ազգային եկեղեցին, որքան հայ-լուսաւորչականները:

Հարկաւոր է որ հայ-կաթօլիկները անխախտ պահպանեն իրանց եկեղեցիներում բոլոր արարողութիւնները և աղօթքները հայերէն լեզուով, աւետարանը տպագրեն հայերէն լեզուով, պահեն ազգային դպրոցներ մայրենի լեզուով, ունենան իրանց սեփական հայ եպիսկոպոսներ, և կախված չը լինեն օտարազգի եպիսկոպոսներից, իրաւունք ունենան իրանք իրանց ընտրված հոգաբարձուներով վարել իրանց եկեղեցական և դպրոցապատկան կարուածները և գործադրել դրամները: Եթէ այսօր նրանց կապը Հոռոմի հետ կը լինի բուն բարոյական, հոգեւոր, նրանք կը մնան կաթօլիկներ, բայց կը լինեն հայ-կաթօլիկներ և ոչ թէ լատին-կաթօլիկներ:

Հարկաւոր է որ հայ-բողոքականները ձեռք բերեն հայ քարոզիչներ և հայ ուսուցիչներ ունենալու իրաւունքը, իրանց սեփական կօնսիստօրիաներ հաստատելու իրաւունքը և միշտ կախված չը լինեն գերմանական կօնսիստօրիաներից, կամ ամերիկական միսիօնարական ընկերութիւններից: Հարկաւոր է որ նրանք իրանք վարեն իրանց ազգային դպրոցներ, ուր ամեն առարկաներ կը մատակարարվեն մայրենի լեզուով, հարկաւոր է որ նրանք ան-

կախ կերպով իշխեն իրանց եկեղեցական համայնքների զանաքանի վրա: Եւ ժամանակ նրանք կը լինեն հայոց աւետարանական ազգային եկեղեցի:

Եթէ այսօր կը կազմվեն երեք ազգային եկեղեցիներ, որոնցից ոչ մէկը չի լինի տիրապետող այն մտքով որ ոչ մէկը չի բռնանայ միւսների վրա, բոլորն էլ կը լինեն միմեանց հաւասար, երեքն էլ կը լինեն ազգային եկեղեցիներ, որովհետեւ երեքն էլ կունենան բուն ազգային եկեղեցական կազմակերպութիւն: Գուցէ միայն այն մտքով նրանցից մէկը, լուսաւորչականը, կը լինի տիրապետող միւսների հետ համեմատելով, որ նրա անդամները աւելի բազմաթիւ կը լինեն, նա կը լինի ազգի մեծամասնութեան ներկայացուցիչը, նա կը ներկայացնի ազգի կրօնական ամենաբազմաթիւ համայնքը:

Բայց իրաւունքների կողմից նրանք երեքն էլ պէտք է հաւասար լինեն ազգի առջև, երեքն էլ պէտք է ազգային եկեղեցիներ լինեն:

Եւ ժամանակ ազգի այդ երեք հոգեւոր համայնքները շատ և շատ դիպուածներում ազգային ընդհանուր շահերը պաշտպանելու, ազգային ընդհանուր խնդիրները վճռելու մէջ կարող են միշտ միմեանց ու ձեռք ձեռքի տուած ընթանալ:

Լուսաւորչական հայերը երկու էլ ունեն միայն իրանց այլակրօն ազգայինների վերաբերութեամբ: Կամ պէտք է յետ մղեն նրանց, թշնամացնեն դէպի ազգը իրանց այլադաւան ազգակիցներին, ինչպէս և մինչև այժմ աւսում էին, թեւադրված լինելով իրանց դարեւոր մոլեռանդութենից և դրդված լինելով իրանց խաւարասէր մտաւոր առաջնորդների յանցաւոր քարոզներով, կամ հաշտութեան ձեռք մեկնեն դէպի կաթօլիկ և բողոքական հայերը և նրանց էլ ճանաչեն իրանց եկեղեցուն հաւասար ազգային եկեղեցիներ:

Երկուսից մէկը կամ ատելութիւնն ու թշնամութիւն, կամ սէրն ու հաշտութիւն:

Թող լաւ մտածեն, որն աւելի օգտաւէտ է ազգի ընդհանրութեան մտաւոր և բարոյական առաջադիմութեան համար և լաւ մտածելուց յետոյ ընտրեն այդ երկու ճանապարհներից մէկը:

Թող չը մոռանան մի ճշմարտութիւն. որտեղ կայ ատելութիւն մի կողմից, կը լինի ատելութիւն և միւս կողմից, բայց որտեղ կայ սէր մի կողմից, կը լինի սէր և միւս կողմից:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍՏԱԿ ԵՒ ՆԱՏԱՅԻՑ

Նոյեմբերի 3

Նիկիտսկի գինեգործութեան և այգեպանութեան ուսումնարանի ժամանակագր սեռու պ. Կանիկէյովսկին տուեց մեզ ֆիլոսոֆիայի մասին հետեւեալ տեղեկութիւնը:

Տեսակցում (տրիստում), որ 45 վերստ հեռավորութեամբ է գտնուում Նալաքա քաղաքից, նորոգում երեւոյց է ֆիլոսոֆիայի, որ սարսափելի կերպով քննարկում է խաղողի ծառերին: Ֆիլոսոֆիայ, ինչպէս յայտնի է, են աստիճաններ միջոտներ, որոնք երեւում են խաղողի ծառերի արմատների վրա և շատ արագ շատանում են, սկսում խաղողի ծառերի արմատների հիւթերը ծծել, և այդպիսով ոչնչացնել: Այդ միջոտները եկած են Ամերիկայից, բայց եւրոպայում առաջին անգամ երեւոյց են 1873 թ. և այժմ կան Ֆրանսիայում, Պորտուգալիայում և այլ տեղեր: Նրանք Ֆրանսիայում ոչնչացրել են մինչև 700 հազար գեղեցիկ խաղողի ծառեր, վանորդ Ֆրանսիայի կառավարութիւնը իւրաքանչիւր տարի մինչև մէկ միլիոն ֆրանկ է ծախում նրանց ոչնչացնելու: Ֆիլոսոֆիայի հետ պատերազմը շատ դժուար է: Սկզբնական գիտէին երկու միջոց, կրակ և ջուր:

Առաջին գործ են զրկել հետեւեալ կերպով: խաղողի ծառերը արմատներով հանելիս են եղել և նրանց վրա նաւթ ածել ու աչրել: Երկրորդ ջուր են բաց թողել այն գաշտի վրա, որ գտնուել է և եղել ֆիլոսոֆիայի, և երկու օր ջուրը կանգնած է եղել նոյն տեղը երկու վերջուկի բարձրութեամբ: Ի հարկէ այդպիսի միջոցները չէր կարելի միշտ և ամեն տեղ գործ անել: Ահա այժմ գտել են երկու նոր միջոց՝ газовая известь և ефироуглеродистый калий: Առաջինը այսպէս են գործածում: խոր քանդում են խաղողի հիւսնը ծառերի տեղերը, որ դնում են գազայ կերել, ծածկում են հողով և հողի մակերեսները զարծեալ դազեայ կերով ծածկում: Այն ժամանակ դազը, որն որ գտնուում է կիրի մէջ, սկսում է բաժանուել կիրից և զանազան տեղերով բարձրանալ դէպի վեր: Այդ միջոցին գազի հոսք ոչնչացնում է ֆիլոսոֆիայի, բայց երկրորդը, ефироуглеродистый калий, որն շատ քարշահուող հեղուանիւ է, սրան ամուր են հիւսնը ծառերի տակ: Ծծմբային ածխածնից ոչնչացնում է ֆիլոսոֆիան, իսկ կալի դառնում է իրեն կերակուր խաղողի ծառերին: Ահա այս միջոցները պէտք է գործ դնեն: Երկրորդ, որտեղ երեւոյց է ֆիլոսոֆիան: Այս միջոցները շատ լիանկ արժեն, վանորդ ուսուցաց տեղութիւնից նշանակված է մեծ գումար և այդ գործը յանձնել են Նիկիտսկի ուսումնարանի գիրեկոսորին—պ. Կանիկէյովսկուն, Ի վերջոյ պ. Կանիկէյովսկին աւելացրեց թէ՛ այստեղից, իրենից, շատ տեղեր մասնաւոր կովկաս ուղարկելու են զանազան տեսակի խաղողի ծառեր, բայց այժմ պէտք է զգուշ լինել, եթէ ոչ, այստեղից վազել բերողները կարող են մի և նոյն հիւսնագործիւնը տարածել և իրանց երկիրներին խաղողի մէջ:

Այլան Նալաքանց

ՆԱՍՏԱԿ ԲԱՌՈՒՅ

Նոյեմբերի 1-ին

Ներկայ նամակով ուղարկում եմ ձեր յարգութեան Պետական Բանկի փոխադրական տնօրէնի 1873 թ. և 30 թ. ընդամենը եօթն հարիւր վաթսուս և եօթն թուրքի, պարտականութիւն համարելով այս գումարի աղբիւրը և նպատակը երկուսը գործիւններ յարմար:

Իմ կառավարութեան յանձնած նաւթային ընկերութեան բաժանորդ անդամակիցները նու-

րելով 10,000 պուդ նաւթ առաքելիցին ինձ ծախել և ստացված գումարը նշանակել տաճկահայոց տնտեսական և մտացական լրանման: Ներկայ գործում եմ պ. Ներկի եղբարք և ընկերութիւնը անհրաժեշտ չը մնաց և մարդասիրական գործին ծառայելու մասնակցութեան անվարձ տեղափոխելով ընծայած նաւթը իրանց խողովակներին միջնորդութեամբ ֆոտոգենի գործարանատեղին, ուր ֆունտը 7 կաշէկով ծախելով պ. Պապայ Բուրխաթանցին, ստացայ 700 թ.:

Ինչ որ կը վերաբերի մնացած 67 թ.-ին, դա գոյացած է հետեւեալ կերպով: Անցեալ տարվայ վերջերը մի խումբ կազմվեցաւ Մարգարիտական անունով, որին յանձնած էր վաճառական աշխարհի սովորներին ծանոթանալու և նրանց համար հանգանակութիւններ բաց անելու պարտականութիւնը:

Այս ընկերական խումբը նպատակադրմար համարեց ժապաւինեալ և վաւերացեալ տեղափոխել ինքն և բաժանել զանազան քաղաքների ծանօթ և յարգելի անձանց, որ նրանք հետեւին հանգանակութեան տարածման և ստացված գումարը ուղարկել ինձ, որպէս ընկերակիցի զանազանի, հանգանակութեան գործին հաւաքական ուժ տալու և ձեր յարգութեան աշխատանքը ըստ կարելոյն թնօնադրելու համար:

Այս օրերս յետ ստացայ Գարբանդ պ. Մեղի Շահազադեանցին զրկած տեղափոխել 22 թ., որի վրա աւելացնելով ստացած պ. պ. Մով. Սերգեանցից 10 թ., Գրիգոր Արամեանց 10 թ., Ա. Տէր-Խաչատրեանց 15 թ., Ա. Միրզա-Աւագեանցի 7 թ., և Վիկտոր Մարչիկից 3 թ., զոյացած է 67 թ.:

Ուղարկելով ներկայ տնտեսական այս փողերը, խնդրում եմ խնամարար յանձն առնել նուրբատունների համետ փոխադրել կատարել ուղարկելով յօդուտ սովակների այդ գումարը 500 թ., և Պոլսի սրբազան Ներսէս պատրիարքի անմիջական տնօրինութեան, իսկ մնացեալ 267 թ., միացնել վաճառականի սովակների համար հանգանակած գումարներին:

Խնդրում եմ ներկայ տեղերիս տպագրութիւնը պատուական ,,Մշակի" մատակայ համարների մէջ ի գլխավորում մեր հայոց հասարակութեան և ի պարզութիւն ինձ յանձնած գործին:

Առաքել Մատուրեանց

ՆԱՍՏԱԿ ԲԱՌՈՒՅ

Նոյեմբերի 3

Պատուական լրագրի մէջ կարդալով վաճառ սովակ մեր եղբայրների զբաղող վիճակը, աշխատելի ժողովել պ. Սիմէոն Ստեփանի Արդու-մեանցի հարսանեայ ուրախութեան ժամանակ Բաղրուի մէջ գտնվող բանի մի գանձակցի և իրաւաբաններից նուէրներ յիշեալ սովաւանդների համար: Խնամարար կը խնդրեմ ձեր պատուական լրագրի մէջ սովել նուիրատուների աշխատանքը, իսկ գումարը հասուցանել ուր հարկն է: Սիմէոն Արդումեանց 25 թ., Յովհաննէս Նաւարեանց 10 թ., Գրիգոր Մանջաւարեանց 5 թ., Աւագ Ղաւարեանց 5 թ., Սամվէլ Բէկ Տէր-Ստեփանով 3 թ., Միկիլ Նալաթեանց 10 թ., Մալ-խասով 5 թ., Պաւլ Տէր-Մարգարեանց 10 թ., Շախտուարով 3 թ., Մինաս Ստեփանեանց 3 թ., Խաչատուր Խաչաֆեանց 2 թ., Կարապետ Ղաւարեանց 5 թ., Արարհամ Սարգիսեանց 3 թ., Միլ-բայէլ Գրիգորի Զախարով 10 թ., Պողոս Միլ-բայեանց 1 թ., Ներսէս Տոնեանց 3 թ., Աւետիք Մ. Ստեփանեանց 5 թ., և եւ 10 թ.: Գումարն է մէկ հարիւր տասն ութ թուրք (118 թ.) դուրս գալով փոսի ծախք մէկ թուրք, կը մնայ 117 թ.:

Ստեփան Մարիսեանց

ՆԱՍՏԱԿ ԵՈՒՇՈՒՅ

Նոյեմբերի 3-ին

Շուշու քաղաքային դպրոցի IV-րդ դաստան աշակերտները իրենց մէջ ժողովելով յօդուտ վաճառ սովակների 22 թ. 20 կողմ, յանձնելին ինձ ուղարկել ձեզ և խնդրել, որ տպագրելով ձեր ,,Մշակ" լրագրի մէջ նուիրատուների անունները, բարեհաճէք փողը հասցնել ուր հարկն է: Զաղարով և խաղախանի (պարսիկներ) 2 թ., Մ. Փարսադանեանց 1 թ., Ն. Իշխանեանց 1 թ., Սերբերեանով 1 թ., Անդ. Մեղի-Փարսադա-

նեանց 1 թ., Շահազադեանց 1 թ., Մարտ. Մեղի-Փարսադանեանց 1 թ., Մուսաեանց 1 թ., Ա. Գրիգորեանց 50 թ., Տէր-Միլբայեանց 1 թ., Ս. Աւագեանց 1 թ., Ի. Աւագեանց 1 թ., Յակ. Տէր-Յովհաննիսեանց 1 թ., Ն. Զաքարեանց 1 թ., Տէր-Յարութեանց 1 թ., Ա. Նազարեանց 1 թ., Տէր-Միլբայեանց 20 թ., Աւատանեանց 1 թ., Զեղզիկեանց վրացի (աշակերտ) 3 թ., ձգնաւորեանց 1 թ., Ն. Գրիգորեանց 50 թ.: Գումարն 22 թ. 20 կողմ:

Ուսուցիչ Յակար Զեղզիկեանց

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Քանաքազաղ, հոկտեմբերի 12

Ձեր պատուական լրագրի 161 համարը բաւականին աղբեղութիւն ունեցաւ տեղիս փողերի հայ խմբի վրա, որոնք չտապեցին իրենց բաժանել հասցնել սովակը զանազանակին. չտրակալու-թիւն այն պարտքներին որ, չը խնայեցին իրենց կողմնակներն իրենց սովակը եղբարք մասն հանելու: Լսեցի որ հարիւր թուրքին աւել ժողովել են սովակը համար, որը չուտով կուղարկեն ձեր խմբագրութեանը:

Յարգել խմբագիր, աչքի առջև ունենալով թիւրքաց Հայաստանի թշուառութիւնները, որա յետ ուղարկեցի երեսուն թուրք, որը կը խնդրեմ հասցնէք ուր հարկն է: Այս փողերի նուէրը ժողոված է մեր ընտանիքում, որ եւնք. Տ. Զմբուխ փանեան 10 թ., Աւետիք և Գաւիթ փանեան 20 թ., ընդամենն 30 թ.:

Աւետիք փանեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մայրաքաղաքների լրագիրները հարգողում են, որ նոյեմբերի 5-ին միմիստր կոմս վալուելի տանը, որ նախագահ է բարձրագոյն հաստատված յանձնաժողովի, որ պէտք է վերաբնդի Ռուսաստանի տպագրական օրէնքները, հաւաքվեցան ժամը երկուսին յանձնաժողովի անդամները իշխան Ն. Ուրուսով, կոմս Լորիս-Մելիքով, Ա. Արազա, Ն. Արազա, Սարգսով, Կոխանով, Պողոսյանց, Ֆրիշ և Մաիով: Բացի սրանցից ներկայ էին մասնակցող ամենանշանաւոր ներկայացուցիչները, այն է ,,Голосъ" լրագրի խմբագիր Կրասնիկի, ,,Молва" լրագրի խմբագիր Պողոսիկի, ,,Соврем. Извѣст." լրագրի խմբագիր Գիլարով—Պրատսով, ,,С. Пет. Вѣд." լրագրի խմբագիր Կոխարով, ,,Новое Время" լրագրի խմբագիր Սուվորին, ,,Вѣст. Европы" ամսագրի խմբագիր Ստասիւէլիչ և վերջապէս ,,Отч. Записки" ամսագրի խմբագիր Սարգիսով: ,,Գոթի" խմբագիրը յայտնեց ուսուցաց ամբողջ մասով ի կողմից այն ցանկութիւնը, որ մասնաւոր, պատահական իր յանցանքների համար եմթարկվի ոչ թէ վարու-թեան պատիժներին կամ հաւածանքներին, այլ դատարանների իրաւասութեանը եմթարկվի, ինչպէս ամեն մի քաղաքացի: Ստասիւէլիչ երկար ատենաբանութեան մէջ յայտնեց այն ցանկութիւնը, որ տպագրական օրէնքները վերաբնդի յանձնաժողովի աշխատութիւնները, գեւա նախ քան վաւերացրած լինելին օրէնսդրական ճանապարհով, մասնակցի դաւանային մասով բաղ-մակողմանի քննութեանը: Գիլարով—Պրատսով յայտնեց այն միտքը, որ մասնաւոր պէտք է համարվի ոչ թէ թշնամի կառավարութեան, այլ նրա բարեկամ: Այդ ցանկութիւններին միացան ներկայ գտնված բոլոր խմբագիրները: Կոմս Լորիս-Մելիքով յայտնեց, որ տպագրական օրէնքների վերաբնդ-նութիւնը այնքան բաղադրեալ և դժուար գործ է, որ չը պէտք է շտապել նրա վճռել և խնդրեց լրագրութեան ներկայացուցիչներին համբերել, որովհետեւ այդ տեսակ գործի աջող վճռելուն հարկաւոր են ոչ թէ չարախներ, այլ ամբիւններ: Նախապէս կոմս վալուելի չտրակալուեթիւն յայտնեց մասնակցի ներկայացուցիչներին, որ նրանք առաջարկում են իրանց աշխատութիւնները թնօնադրել յանձնաժողովի աշխատութիւն-ները: Իրանց կողմից պրէսայի ներկայացուցիչները չտրակալուեթիւն յայտնեցին յանձնա-ժողովին, որ սա պատիւ արեց նրանց հրաւրե-լու և նրանց կարծիքը լսելու: Մասնակցի «Молв. Вѣд.» լրագրի խմբագիր պ. Կոխարով, նոյնպէս հրաւիրեմ էր յանձնաժողովի նիստին, բայց նա հեռագրով խնայ տուեց, որ տկարու-

թեան պատճառով չէ կարող գալ Ս. Պետեր-բուրգ:

Մասնակցի ,,Русскій Курьеръ" լրագիրը խոսելով տպագրական օրէնքների վերաբնդութեան խնդրի մասին, հարցնում է թէ՛ միթէ կրկին կը ժողովի դաւառական լրագրութեան դու-թիւնը: Եթէ մայրաքաղաքների մասնաւոր տպա-տութիւն կը ստանայ, միթէ դաւառականը նոյն դրութեան մէջ կը մնայ, առում է ուսու թնօնը, այն ինչ դաւառական լրագրութիւնը կարելի է մայրաքաղաքի մասնակցի մոտեղ տուող համարել:

Այս տարի «Մշակը» ունի 1500 թուրք ապա-ռիկներ իր բաժանորդների վրա: Կրկնում ենք մեր խնդրքը, որ այդ փողերը չուտով ուղար-կեն մեր խմբագրութեանը: Ամբողջ աշխարհի երեսին լրագրին գրվելով մարդիկ խնդրեց փող են վճարում, միայն հայերը մնացին մի նոր սովա-րութիւն. գրվում են լրագրին, փող սկզբից չեն տալիս, ամբողջ տարի լրագիրը կարգում են և դարձեալ պարտ են մնում մինչև սարկայ վեր-ջը: Շատ անգամ փող էլ չեն վճարում ամենին: Իսկ ով որ վճարել է, հէնց որ մի յօդուած չէ հաւանում լրագրի մէջ, խնդրեց փող յետ է պահանջում: Այդպիսով ոչ մի լրագիր չէ կարող դիմանալ հայերի մէջ, մասնաւոր ամենօրեայ թերթ: Նրանց հայր տարկայ ընթացքում շահեց-նում է այն տարւ թուրքին, որ պէտք է ուղար-կի լրագրին և միայն տարկայ վերջն է ուղար-կում: յայտնի է մայրաքաղաքի միջոցով:

Նոյեմբերի 1-ին ամբողջ թիֆլիսը զգաց երկ-րաշարժի հարուած, իսկ թիֆլիսի ֆիզիկական Օրենքատարական միակ էր, որ ոչինչ չը զգաց: Այդ հիւսնաբանութեան կառավարիչը յայտնել է «Кавказъ» լրագրում, որ թիֆլիսի այն թաղում, որտեղ չինված է Օրենքատարական, երկրաշարժ չէ եղել: Այդ ինչ անյարմար տեղումն է չին-ված Օրենքատարական. նրա պարտաւորութիւնն է հետեւ երկրաշարժի երեւոյթներին, բայց այդ դրան երբէք չէ աղոյգում: Քանի անգամ եղել է թիֆլիսում երկրաշարժ, բայց օրենքատարա-կի թաղին երբէք չէ հասել: Երկի երկրաշարժը վախենում է դարձեալ օրենքատարական պարտն-ներին, որոնք միշտ քաղցր ընով են ընած լի-նում:

ՇՈՒՇՈՒՅ մեզ գրում են, որ այդ քաղաքում և նրա գաւառում գործութիւնները և աւաղակու-թիւնները շարունակվում են: Այս օրերս կո-ղպուտեցին Յովհաննէս Միլտի հայոց եկեղեցին:

Այս օրերում, ինչպէս մեզ գրում են Շուշուց, մի աւաղակ, որին վճռված էր ուղարկել Սերբի, և որ դատաւարված էր առաջնակի աշխա-տանքներին, դատաւարանից վերադառնալով վերջին փորձ է փորձում գաւառատիրին տան առաջն փախչելու պահանջան դիւնուորների ձեռ-քից: Բայց այդ նորան չէ աղոյգում: պահանջան դիւնուորներից մինը վրա է հասնում և իր հրա-ցանի ծաղրով (սովակով) սատակ վրաւորում է փախչողին, որ խնդրեց ընկնում է և նրան կրկին բանդ են տանում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱՇԱՐԺ ԱՆՍՏՐԱՅՈՒՄ

Հոկտեմբերի 28-ին մեծ երկրաշարժ ե-ղաւ Աղսում (Զաքէք) աւաղական քա-ղաքում: Նոյն ժամանակ, թէև թոյլ կեր-պով երկրաշարժ պայի եղաւ և Վիեննա-յում: Աղսում քաղաքը մեծ քնաներ կրեց, մօտ երեք միլիոն շատ տներ բոլորովին քանդվել են, բաւական մեծ թւով եկեղե-ցիներ քնածվել են, մասնաւոր քնածված է մայր-եկեղեցին: Մօտ յիսուն մարդ սպան-վել են տների տեղակների տակ:

Այս օրերս գարձեալ կրկնվել է երկրա-շարժը Ագրամի մէջ, թէև աւելի թոյլ կերպով: Վաղուց է այդ տեսակ երկրաշար-ժներ եւրոպայում չէին տեսնու: Վառավա-րութիւնը, քաղաքային վարչութիւնը և մասնաւոր անձինք կարգում են մասնաժո-ղովներ, հանգանակում են փողեր քնածված-ներին օգնելու համար:

ԳԼՈՒԿՈՍՏՈՒ ԶԱՌԸ

Լրագիրներն մէջ ազգայն է Գլուկոստի հետեւեալ ճառը, որ նա խօսեց Լոնդոնի յորդման տուած ճաշի ժամանակ:

Արտաքին քաղաքականութեան մէջ մեր հայացքները շատ կետեղի վրա պէտք է դարձնենք: Արեւելեան հարցը չէ կարելի անուշադիր թողնել: Այդ կողմից մենք առանձին բաւականութեան կարող ենք դադել: Արդիւնէն ժամանակները քաղաքական անհամաձայնութիւնները չափազանց ուժեղ էին, ուրեմն մենք այնուամենայնիւ պէտք է ի նկատի առնէինք մեր հակառակորդները յայտնութիւնները և ձգտէինք հասնել այն նպատակին, որ որոշել էր իր համար նախկին կառավարութիւնը: Ահա այստեղից, որ ես այժմ կանգնած եմ, նախկին մինիստրութեան նախագահը յայտնեց, որ Բերլինի դաշնագիրը մեծ օգուտներ կը տայ Եւրոպային, եթէ կատարեալպէս կիրառուի: Դա յայտնեց միևնույն ժամանակ, որ Անգլիան կը կատարէ իր բոլոր պարտականութիւնները այդ դաշնագիրը իրագործելու համար և յոյս յայտնեց, որ դաշնագրի վճիռները կիրառուի մեծ անհակարժ ժամանակամիջոցի մէջ: Յը պէտք է դարձնալ, որ այդ յոյսը չափազանց ընդհանրած էր: Երբեք, երբ մենք սկսեցինք կառավարել Երկիրը, տեսնեք, որ դաշնագրի նշանաւոր վճիռներից մեծ մասը մինչև անգամ չէին սկսել իրագործել: Իրագործել նախկին կառավարութիւնից մեզ կը տակաւ դաշնագիրը: Մեր կարծիքով այդ մեր պարտականութիւնն էր և մենք սկսեցինք մեր պարտականութիւնը կատարել, որովհետեւ այն ժամանակ երկրի մէջ մեծ համաձայնութիւն կար: Մի քանի օր կարծում էր, որ մենք սկսեցինք գործը դէպի թիւրքիս թշնամեալ տրամադրված: Բնականաւոր մենք նրա բարեկամներն ենք, որովհետեւ խորհուրդ ենք տալիս թիւրքիս հետեւել այն քաղաքականութեանը, որ կարող է երկարացնել նրա գոյութիւնը: Թիւրքիս ուրիշ բարեկամներ ունին: Ես չեմ խօսում մեր այն հայրենակիցների մասին, որոնք գործեցին թիւրքիս մի պատերազմ սկսել, որի պատճառով այդ երկիրը փոքրացաւ: Մենք չենք կամենում, որ մեր բարեկամութիւնը այսպիսի բարեկամութիւն համարեն, բայց մենք կարծում ենք, որ թիւրքիսի գոյութիւնը երկարացնելու և նրան արդարացնելու համար անհրաժեշտ են երկու գործ. առաջինը, որ թիւրքիս կատարէ իր միջազգային պարտականութիւնները և երկրորդը, որ իրաւացի է և լաւ օրէնքներով նա բարեկամ իր հպատակ ժողովուրդներին դրութիւնը: Այս բանը մենք խելացի և անհրաժեշտ ենք համարում: Թիւրքաց կայսերութեան մէջ կան մի քանի անյայտ տեղեր, որտեղ թող կազմակերպութեան շնորհիւ ազգաբնակչութիւնը մեծ արտօնութիւններ է վայելում: Բոլոր այսպիսի տեղերում ժողովուրդը բազմաթիւ է: Իսկ այն տեղերը, որ ժողովուրդներն են ծագում, ազգաբնակչութիւնը գուր է տեղական հակողութեանց և կառավարում է: Եւ Պոլսի մէջ զբաղւած այնպիսի մարկերանցից, որոնք ինչքան էլ լաւ ցանկութիւններ ունենան, գործի համար պիտանի չեն: Մի կարծեք, որ այդ ազգաբնակչութիւնը անգլիացի էլ լինելով, երբեմն մինչև անգամ քրիստոնեայ չը լինելով, անորժան են վայելի քաղաքային լաւ կառավարութեան բարեքները: Ինչհամար, հաւատարմութեան եղեք,

որ նրանք շատ բան են խոստանում և ես երբեք նրանց մասին արհամարհանքով չեմ խօսել և ոչ ոք էլ չը պէտք է այսպէս խօսի, մի և նոյն է քրիստոնեայ են նրանք, թէ ոչ: Մենք ցանկանում ենք բարեկամել նրանց դրութիւնը խելացի և արդար միջոցներով: Բերլինի դաշնագիրը վճիռ էր կանոնադրել թիւրքիսի սահմանները և այդ պայմանը իրագործված չէր: Քուստուսանի վերաբերութեամբ դաշնագիրը փոփոխութիւններ է պահանջում, որոնք դեռ չեն կատարված: Դաշնագրի վճիռները պահանջում են անգլիան արտօնութիւնները չափաւորել համար, բռնութիւնների և հարստահարութիւնների ծնշելը թէ այդ երկրի մէջ և թէ թիւրքիսի միւս մասերում, բայց դեռ ոչինչ չէ կատարված: Ես չեմ ասի, որ թիւրքիսի դրա մասին չէ էլ մտածել, որովհետեւ նա ձեռնարկեց մի քանի միջոցների, բայց դաշնագրի դիտարկ վճիռների իրագործելու համար մի քայլ անգամ չէ արված: Եւրեմն մենք աշխատում էինք իրագործել Բերլինի դաշնագիրը եւրոպական կոնցրեսի օգնութեամբ: Մենք չէինք կամենում առանձնացած գործել և Անգլիայի վրա դնել ամբողջ Եւրոպայի պարտականութիւնները: Մենք միայն կարող ենք նպատակ եւրոպական համաձայնութեանը և նրա նախագծի իրագործելուն Եւրոպական համաձայնութիւնը այն առաւելութիւնն ունի, որ նա առեւտրային գէշեր է և չեմ ասում, որ այդ գէշերը շատ հեշտ է գործածել, որովհետեւ պետութիւնների ազատ կարծիքները և անկախութիւնը դժուարացնում են այդ գէշերի գործածութիւնը: Բայց մենք չը պէտք է յուսահատվենք, որ Եւրոպական համաձայնութեան օգնութեամբ կարող ենք մի բան ստանալ: Մի քանի ժամ առաջ մենք ստացանք սուլթանի հրամանով ուղարկված հեռագիրները, որոնք հաղորդում են, թէ այսօր կամ վաղը Դուքլինի վերաբերութեամբ կատարեալ բաւականացուցիչ տեղեկութիւններ կը ստանանք: Թէպէտ հին առաջին համեմատ մենք բոլոր լուրերին չը պէտք է հաւատանք, այնուամենայնիւ մենք ուրախ լուրը ստացանք շատ բարձր աղբիւրից:

Գլխաւոր ճառը անգլադար ընդհատվում էր ծափահարութիւններով:

ԱՊՍՏՈՒՄՈՒԹԻՒՆ ԲՐԻՍՏԱՆՈՒՄ

Պարսկաստանի արտաքին գործոց նախարարն հետեւեալ հեռագիրն ուղղած է մայրաքաղաքի պարսկական զեւպանատան:

«Յէրան, 15 հոկտեմբերի. յիշելու և պէտուլասին չէքքեարի բնակիչ երկու որդիքն և չափաւոր աղա անուն հոշախաւոր աւագակալեալ Վալիբեկը և Մարախայի գաւառաց մէջ (ի Պարսկաստան) աւարաւորութեան և չարագործութեանց սկսան: Չանոնը զգալու համար զօրք զրկուեցաւ այն կողմի: Ստորագրիք այն տեղերը դրանուղ քրդաց վայրերի բնակչութիւնն ու տարբերութիւններ չեն գիտել: Ասոնց կողմէ տեղի ունեցած յարձակողական շարժումը կարեւորութեան գուրի են, և իրենց նպատակն աւագակալութիւն է միայն: Պարսկական զօրաց մտնելուն լուրն խմանալով Մարախայի մտնելին ի փախուստ աւագակալից: Պարագրուիներն ի մտոյ պիտի բռնուին: Այս իրողութիւնները Բ. Գրան արտաքին գործոց նախարարութեան հաղորդեցեք և լիք հոկտեմբերի 15-ը հրատարակել: Տրատարակութեան յանձնեցեք: Ես ալ զանոնք Յէրան նստող օտար դեսպանաց կը ծանուցանեմ: Վաղը լրագիրը, փրօյիշեալ հեռագիրն հրատարակելու առթիւ, հետեւեալ տեղեկութիւնները կուտայ չափաւոր Աղա կոչուած Գուրդ պէլին վրայ:»

«Շաւր, 15-50 տարեկան մարդ մէ երկայն հասակաւ. Ալլապի Աշիւ-

թին կը վերաբերի, որ Բէկանուզի և Վալիբեկի միջև վրանդներու տակ կը բնակի, և ամառը Պարսկական հողն անցնելով Շիւ և Վալիբեկի կողմերը կը լիւթայ, իսկ ձմեռն Օսմանեան հողը կը վերադառնայ, Ալլապի Աշիւն հիւսիս Վալիբեկի և Վէլբեկի Աշիւններն ալ կան, որք ազգական և զաւնակից են:

Այս ցեղերն երբ ամառը Պարսկաստան անցնին, Վալիբեկի կառավարչին քանի մը ձի բնծայ կը գրին, և երբ ձմեռն օսմանեան սահմանադրուք գան, աւելը կը վճարեն, բայց գինուք չեն գրուիր:

Նամիզ փաշան Պարսկաստանի կուսակալ եղած ժամանակ, չափաւոր Աղան սահմանադրուին անցած լինելով, Նամիզ փաշան յայնժամ Վէլիբեկի ցօրի կառավարչի թաքիտաւր փաշա քանի մը վառ գործով դըրկեց, որք չափաւոր Աղան պաշարելով ձերբակալեցին, թաքիտաւր փաշան չափաւոր Աղան Պարսկաստան գրեց, ուր ժամանակ մը բնակարանի մնաց:

Միտհատ փաշային Պարսկաստանի կուսակալութեան ժամանակ, չափաւոր աղբիւրներ մը մատուցանելով, երաշխաւոր տուաւ, և խոստացաւ իւր Աշիւններն քով չըլծալ:

Միտհատ փաշային առաջին անգամ Վեժ-Կարքուսութեան ժամանակն ալ յիշեալ չափաւոր աղան Կ. Պոլսի գալով, Աղ-Աշիւնի կողմէ տուն մը վարձեց, և ամառացեալ:

Փանի մը տարի Կ. Պոլսի բնակիչ յետոյ ամիսն հազար դրուշ ամալանի արժանացաւ, և Պարսկաստան բնակելու համար Կ. Պոլսէն ծանուցիլ ելաւ: Եւրոպական ժամանակ մը Պարսկաստան բնակեցաւ, բայց յետոյ կերպով մը փախչելով, դարձեալ Ալլապի Աշիւններն քով գնաց:

Յայնժամ, այս չափաւոր Աղան Ալլապի, Մամիշի և Վէլբեկի Աշիւններու նախագահութիւնն ստանձնելով, Օսմանեան և Պարսկական սահմանագիծը վրայ ըստ առաջնայն վրանդեակ կեանք մը կը վարէր, և իւր հրամանաց ներքեւ միշտ 4—5 հազար ձիաւոր կը դնուէր:

Այս տարի ամառը Վալիբեկի կողմէ գնացած էր, և կրտսի թէ տեղեւոյն (Պարսիկ) կառավարչին թշնամեք և անխառնութիւն տեսած լինելով, այն տեղերու բոլոր քրդաց հետ միացաւ, և ապրտամբութեան զօրք պարկեց: Կը պատմուի նաեւ թէ չափաւոր աղան Պարսկական սահմանագիծին վրայ Սիւլեյմանիէի մօտը Սիւլեյմանի Պարսկական նահանգին կուսակալ Կարալի-Ֆէթհ Միլիթի խանին, որ Պարսիկ չափին հօրեղբայրն էր սպանուելից նամակ մը գրելով, պահանջէր, որ Սիւլեյման քաղաքը յանձնէ, և նոյն կուսակալութեան երկու գաւառներն ալ դրաւեր է:

Իսկ Շէյխ Աւալիբեկը Վալիբեկի կուսակալութեան ներքեւ կաւարի և Շամի-Նանի բնակիչներէն հոշախաւոր Գուրդ գրուի մը: Պարսկական հողին վրայ 5—10 զիւղի տէր է, և իւր թէ Պարսիկ պաշտանատարաց կողմանէ անխառնութիւն տեսած լինելով, չափաւոր Աղային հետ միացեր, և Պարսկական հողն արշաւել է:

Վաղը թիւ այս տեղեկութիւնները բաւական անհրաժեշտ և գոհացուցիչ են, և այդ լրագիրը մինչև ցարդ քրդամբութեան համբաւ հանած չը լինելով, հաւանական է որ կատարեալպէս ծիշա լինին:

Այս տեղեկութիւններէն գոհացուցիչ եզրակացութիւն կրամք հանել. այսինքն թէրձեմանը չափաւորութիւն Շէյխ Աւալիբեկը լաշի ըսել առաւմին պէս Պարսիկ Գուրդը Օսմանեան հողը հանած չէն, այլ Գուրդը սպառնալով Պարսկական հողը մտած են: Հետեւաբար, եթէ կայսերական կառավարութեան կողմանէ պէտք եղած զինուորական միջոցներ ժամանակին ձեռք առնուին, վաւարեալանի ցրտանոցի և ուրիշ բնակիչ կրան ազատ մնալ Գուրդը սպառնալուց սովորական չարագործութիւններէն:

Թէրձեմանը չափաւոր հարաւորութիւն քրդացաւոր օրակիրը քրդական նոր սպանաւորութեան նկատմամբ կատարեալ լուրջութիւն կը պահէ:

(Մարախ)

Լրագիրներն մէջ կարդում ենք: Նորիւրում ստացված հեռագիրը առթիւ է տալիս բոլորովին ուրիշ կերպ մեկնելու այն

բոլորը, ինչ որ պատահում է Քուստուսանի մէջ Բերլինի կոնցրեսիցիայի կայանարուց յետոյ: Քուստուսան ազգային ժողովի մէջ այժմեան առաջին մինիստր Լուսնաբուրսի և նրա նախորդ Տրիկուպիսի մէջ պատահած վիճաբանութիւններից երեւաց, որ հիմնովին սուտ էր այն լուրը, իբր թէ Քուստուսանը կազմակերպում է իւր գործերը և բաղադրակ պատրաստում է պատերազմի համար պետութիւնների հաւանութեամբ:

Երբ հիտեւ Լուսնաբուրս ախարկեց, որ նախկին կառավարութիւնը անգործ վարվեց և սկսեց կազմակերպել յուսական գործերը, յուսալով մեծ պետութիւնների օգնութեան վրա, Տրիկուպիս պահանջեց հրատարակել յուսական կառավարութեան և մեծ պետութիւնների մէջ եղած գրագրութիւնը, հաւատացած լինելով, որ այժմեան առաջին մինիստրը անյարմար կը դանի այդ գործը: Լուսնաբուրս ժողովի հետեւեալ նիստին բերեց իր հետ յիշեալ դուկմենտները և յայտնեց, որ կառավարութեան կարգադրութիւնները համաձայն չեն եղել միջազգային յարաբերութիւնների դրութեան հետ:

Այս բոլորից երեւում է, որ յուսական հարցի պատճառով մեծ խռնակութիւն է պատահել: Քուստուսան ժողովուրդը խաբված էր իր նախկին կառավարութեանց, որ հաւատացել էր, թէ նրանց պահանջված զոհաբերութիւնները անհրաժեշտ են այն նախագիծը իրագործելու համար, որ ստացիլ է մեծ պետութիւնների հաւանութիւնը և որի աջողութիւնը պետութիւնները երաշխաւորել են: Այժմեան մինիստրը հաւատացնում է, որ այդպիսի բան չէ եղած:

Այս յայտնութիւնը իսկապէս պէտք է փոփոխել Քուստուսանի բռնած ընթացքը: Եթէ յուսական կառավարութիւնը յոյս չունի, որ պետութիւններից գոնեա մի քանիսը նրան կը պաշտպանեն, ուրեմն նրան մնում է արձակել իր գործերը և գոնեա ժամանակաւորապէս չը յուսալ, որ կը ստանայ այն նահանգները, որոնք տուած են նրան Բերլինի կոնցրեսիցիայի վճիռ համեմատ:

Այնուամենայնիւ մինչև այժմ յուսական կառավարութիւնը ցոյց չէ տալիս, որ մտադիր է թողնել սկսած գործը Ազգային ժողովի մէջ բացատրած փաստերը վերջոյ պէտք է յայտնի լինէին Լուսնաբուրսին, բայց նա յետ չէ կանգնել: Մինչև այժմ թէ Ալլապից և թէ Կ. Պոլսից լուրեր են ստացվում, որ յուսական կառավարութիւնը մտադիր է գրուել այն նահանգները, որոնց նա ստացել է Բերլինի կոնցրեսիցիայից: Բոլոր ժամանակ Քուստուսանի մէջ կամաւորներ են հաւաքում, իսկ թիւրքաց կառավարութիւնը կենտրոնացնում է իր գործերը այնտեղ, որտեղից սպասում է յուսական գործերի յարձակմանը: Բացի այդ թիւրքիս ամբարցից Գարանեւեան նեղուցը:

Այս բոլորը սպառնացնում է, որ յուսական կառավարութիւնը չէ թողնել իր մտադրութիւնը և համաձայն չէ Լուսնաբուրսի յայտնութիւնների հետ:

ՄԵԼԿԻ ԷՆԻՇԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՍԻՆ ԲԵԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻՐ, 13 նոյեմբերի: «Россія» լրագրին առանձին համարներով ծախելը թոյլ է տուած:

ԼԻՎՈՐՆՈ, 12 նոյեմբերի: Շոքեաւ «Եւրոպիկա» զխաւ Փրանսիական «Օզգէֆ» շոքեաւին, որ ծովը ընդմիջեց 250 մարդկերանցով:

Կ. ՊՈԼԻՍ, 12 նոյեմբերի: Գուլցինի մտանկուց յետոյ Գերլիշ-փաշա հրաւիրեց Անախարիսի մէջ եղած չերսգործական զօրքերի հրամանատարին զալ Լուսնա չափիքի հետ միասին դաշնագրութիւնը ստորագրելու համար:

ԽՈՐԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿՈՂ ԳՐԻԳՈՐ ԱՐԲՈՐՈՒՆԻ

ՖԱԼԱՆԳ

ОБЪ ИЗДАНИИ ВЪ ТИФЛИСѢ ХУДОЖЕСТВЕННО-ЮМОРИСТИЧЕСКАГО ЖУРНАЛА „ФАЛАНГА“

«ФАЛАНГА» будетъ выходить еженедѣльно по воскресеньямъ. Первый номеръ выйдетъ въ среднихъ числахъ ноября мѣсяца текущаго года. Нумера нынѣшняго года предназначаются исключительно для розничной продажи, которая будетъ организована въ Тифлисѣ и въ прочихъ городахъ Имперіи. По подпискѣ же журналъ будетъ доставляться съ января мѣсяца будущаго 1881 года.

УСЛОВІЯ ПОДПИСКИ


Съ доставкою на домъ.	
На 1 годъ.....	8 р. — к.
» 6 мѣсяцевъ.....	4 р. 50 к.
» 3 мѣсяца.....	2 р. 50 к.
Съ разсылкою по Имперіи.	
На 1 годъ.....	8 р. 50 к.
» 6 мѣсяцевъ.....	5 р. — к.
» 3 мѣсяца.....	2 р. 75 к.

Подписка и объявленія принимаются въ конторѣ редакціи, на Эриванской площади, въ домѣ Харазова, № 3.
Контора открыта ежедневно отъ 9 до 2 и отъ 5 до 7 часовъ вечера.

ОТЪ РЕДАКЦІИ „ФАЛАНГА“

Статьи, стихотворенія и корреспонденціи, предназначаемыя для напечатанія въ «Фалангѣ», должны быть за подписью автора и съ адресомъ его, иначе печатанію они подлежать не будутъ.
Статьи безъ обозначенія условій гонорара будутъ считаться редакціей бесплатными.
Редакція оставляетъ за собою право сокращать и измѣнять присланныя рукописи по своему усмотрѣнію.
Статьи, признанныя редакціей неудобными къ печати авторамъ не возвращаются.
Для объясненій съ редакторомъ редакція открыта по понедѣльникамъ, средамъ и пятницамъ, отъ 12 до 3 часовъ по полудни. Адресъ: Тифлисъ, Эриванская пл., домъ № 3.
Въ трудахъ редакціи непосредственное участіе примутъ Н. В. Симборскій и Горесѣховъ (это не я). Изъ числа лицъ, изъявившихъ согласіе быть сотрудниками «Фаланги», назовемъ пока Д. Д. Минаева, А. И. Пальма, Н. А. Плещеева, Н. А. Бебутова, И. Ф. Тхоржевскаго (Иванъ да Марья), «Наслѣдственнаго поэта», Ак. Церетели. Каррикатуры будутъ исполняться художникомъ Петерсономъ (псевдонимъ).


Редакторъ-издатель Ив. Питоевъ.
10—10



Կ. ՊԱՆՅԵՐ

ԵՏԵՄԵՆՍԿԱՅԵ ՓՈԴՈՑ

առև Զուգարավոր Եկող ձեռնակ
սեղանի համար առաջարկում են պա-
տենի հասարակությունը Մեծ
ԿԵՆՏՐՈՆԻՍԵՐ ԶԵՆՈՒԹԻ ՈՏԻԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԵՆԵՐ, Երոզա-
կան առաջնակարգ ԳՈՐԾԱՐԵՆՆԵՐԻՑ ամենամոդ ՁԵՆԻՑԻ չափազանց
ԷՃԱՆ գեներով, այսինքն Ձեռքի մեքենաներ 12—15 րուր: Ոտքի 50—80 րուր:
24—52



ԼՐԵԳՐԵԿՆԵ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԳՐԵՍԵՆԵՆԿՈՒՄ Բ. ՀԱՆԳԵՐԴԵԱՆԻ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

(Գործիչների Պրոսպեկտի մաս, Ալեքսանդրյան ուղի 50)
Բաժանորդագրվում են, թէ տեղական, թէ ուսանող և թէ արտասահմանյան պարբերական բոլոր հրատարակություններին, նոյն իսկ խմբագրատանց յայտած գներով: Օտար տեղերից թող բարեհաճեն գրիմել հետևել հասցեով.
Են Թիֆլիս, են գազետայն Ե. Տաբերդով.

30—2

ՍՏԵՅՎԱՆԻ

Ստեանից նոր Ժիկա, ծախվում է Մի-
խայրովի կամուրջի վրա ԱՐՇԱԿ ՄԻ-
ԲՈՒՄՈՎԻ մագապինում № 41 և 42.
3—3

ՄԵՔԵՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԸ
պղնձե, ցինկի, արձրձի և ջրանցքների
գործերի Ե. Ե. ԳԵՐՄԱՆԻ, գտնվում է
Կուկի, Միխայրովայն փողոցի վրա, առև
№ 52, Թիֆլիս:

ՕՐՇՈՅՑ 1881 թ.

Ռ. Յ. ՏԵՐ-ԵՐԱՄԵԱՆԵՐԻ, գրին է 15
կողմից:
Վաճառվում է Զաքարյան Գրիգոր-
յանցի «Վոլկանան» գրախառնանդում
Տիֆլիս: 15—21

Մանկացած ՁԱՆՁՈՒՂԱՉՈՎ, կղայրների
գործերի համար նշանակված ՄԵՐՈՂԱԿԱՆ
ՎԱՐՁՈՒԹԱՆ կարգադրություններ, ջանքով-
գովների մեծ խանութի մէջ, Գործիչական
հրատարակի վրա ՄԵՐՈՒՄՆՈՎԻ ՏԱՆԸ ապ-
րանքներ ԿԸ ԽԱԿԵՆ, նոյնպէս չուգունի
ՎԱՐՈՒՄՆԵՐ հատով և մեծ քանակու-
թեամբ ամենայն օր առաւօտեան 10 ժամից
մինչև 2 և երեկոյեան 5—8 ժամը:
Խնամակալ պ. Լեբեգինսկի:

ԲԵՐԼԻՆԻ ՆՈՐԵՉԵԻ ԲԵՐԼԵՐ
ԲԵՐԼԵՐԻ 15-ից, Սոյալի, Գանձակայն փո-
ղոց, ա. Գանձակայնի խանութից վերև,
կենդան Բերլինի տանը № 2 և 3:
Երկու կարելի է ստանալ մեծ քանա-
կութեամբ կանանց և երեխաների
նորաձե հագուստներ, ինչպէս օտար-
ներ, գործածներ, գանազան տեսակի
պայտներ և մեծ քանակութեամբ կա-
նանց և երեխաների նորաձե գլխարկ-
ներ և նրանց պատկանելիք: Նոյն տեղը
կարելի է գտնել գանազան նկարների
գրապիսի, կատարել թաւիշ (մանուկ):
Բերլինի մէջ նոյնպէս ամեն տեսակ
պատուէրներ: Գները ամենաչափաւոր են:

9—10


ՄԵՐՈՒՄՆԵՐ ՄԻՋՆՈՐԻ

Հատկէր փոխառ են այնպիսի անձանց,
որոնք էժան գնով խորհուրդը
նրա տային, թողնել գրելիս և միջ-
նորդ է ինչ փառք ան, քա-
ղաքային, քրէական, երկր-
չափ ան կան գործերի համար դա-
տաւան ան կան և փառք ան-
կան հիմարութիւնների մէջ: Հոգա-
բարձական հաշիւներ կազմել, հրեղ լրա-
գրական թղթակցութիւններ: Կազմել
կտակների նախագիծեր, պարտաւոր-
ւոր, պայմանագրեր: Զանկացողները չա-
փառք գնով կարող են գրիմել ինչ անձանց,
իսկ օտարաբանութեամբ փոխով հետևել
հասցեով: Մասնագիտ փողոց, արձանի
տեղը, առև № 17, մուտքը հացթուխի
գիմարը, կամ Կրեւարդի նոտարիոսի գրա-
սենական միջնորդութեամբ:

3—3


ԳԼԵՆՈՒՂԱՉՈՎ ԵՂԱՅԵՐ-
ՆԵՐԻ ԽԵՆՈՒԹԻ ՄԷՋ կը վաճառվի
առանց աճուրդի մեծ քանակութեամբ և
մաս մաս 120 պուր. ԿԵՐԼԻ, 14 դրեք
ԹԵՅԻ ԹՈՒՂԹ, ՕՂԻ Պօպով և
Հարկների 40 արեղ, ԽՅԵՆԵՐ
մոտ 40 պուր, ՀԵՄԱՆԵՆԵՐ գրի
արտասահմանի և ուսանող, ԹԵՅ արկի-
րով և Ֆունտանց, ՊԵՆԻ Կոլոլ և ար-
կիների մէջ 18 պուր և գանազան ձեռի ՈՏ-
ՆԵՄԱՆԵՐ և ԿԵՐԼԻՆԵՐ:
Զանկացողները գնել այդ ապրանքներից
մեծ քանակութեամբ, կամ մասերով կարող
են տեսնել նրանց ամենայն օր առաւօտեան
10 ժամից մինչև 2 կէսօրից յետոյ և իւ-
րաքանչիւր գնող կարող է գրիմել մրցողա-
կան վարչութեան անդամներին, որոնք ներ-
կայ են վաճառմանը:

1—5



ԿԱԼԵՆԴԱՐ
անունով, ծախվում է Երոզայն բոլոր մեծ քա-
ղաքների գեղարտների և գրողների մոտ: Գր-
կաւոր դէպո նրա շարքը 3 ար մացիայի ամ-
գասարուս Կ. ԿԱՐՊԻՆՍԿԻ գեղարտան մէջն է
գտնվում վարչապետի, Երկարաւոր փողոց, №
35, Գալանդինի մեծ արկիլը արժէ վարչապ-
ետ 50 կոպ., առև փողը 30 կ., Պէտր Երզ-
գուշանալ խարդախութեանց:

23—25 Կ. ԿԱՐՊԻՆՍԿԻ (1)



Գործիչու կղայրների ցրելի մոտ շա-
բաթ օրվանից, նոյնների 7-ից կը բացվի
պատմական, աշխարհիկ յայտնի Լ. Օ-
դոնի Վեոս-Լինգ մագապի ուս-
որ կունենայ երեք բաժիններ, որոնց մէջ
կան 1000-ից առևի մոմէ երեկի պատ-
կէրներ և նրանցից 50 բնական մե-
ծութեամբ: Մուտքի գրին է 40 կ., կա-
տարեալ բացատրող կատարողը արժէ 10
կ.: Երեխաները մանուկ են միայն արհես-
տական և պատմական բաժինները և մուտ-
քի համար վճարում են 4 էս գրին:
Պատկերներ շինող Լ. Նեյվալդ:

5—5

ՈՍԿԵ ԵՒ ԱՐՄԱԹԻ ԻՐԵՂԵՆԵՐԻ ՎԱՃԱՌՈՒ-
ՄԸ ՁԱՆՁՈՒՂԱՉՈՎ, կղայրների խանու-
թեւ մրցողական վարչութիւնը նշանակել
է կիրակի, ներկայ նոյնների 16-ին առա-
ւօտեան 10 ժամից մինչև 2 կէսօրից յետոյ:

2—3

НЕВА

1881. ИЛЛЮСТРИР. ГАЗЕТА, XXIV Г.

«Нева» состоитъ изъ 3 изданій: а) Нева, б) Журналъ Романовъ и Повѣстей в) Парижскія моды, полный дамскій журналъ 4000 столбцовъ текста и 600 великолѣпнѣйшихъ иллюстрацій.
4 преміи, въ томъ числѣ обратившій на себя общее вниманіе большой гравированный на стали портретъ Государя Наслѣдника, 2 олеографія съ картинъ Айвазовскаго и Клевера и гравюра Гельбута «Въ поляхъ» съ парижской выставки.
Цѣна 6 руб. и за тщательную упаковку и перес. премій 50 к. Безъ доставки 5 руб., съ доставкою 6 р.

Нева и Иллюстриров. Вѣстникъ съ большимъ роскошно выполненнымъ на стали портретомъ Е. И. В. Наслѣдника Цесаревны 9 р. и за тщательную упаковку и перес. премій 50 к. Безъ дост. 8 р., съ дост. 9 руб.
«Нева» представляетъ собой въ настоящемъ смыслѣ слова Газету для всѣхъ и обо всемъ. Польза, удовольствіе, интересъ доставляемое ею, дѣлаютъ ее необходимой въ каждой образованной семьѣ.
Первыя тысячи подписчиковъ получаютъ всѣ преміи въ декабрѣ 1880 г.

Иллюстр. Календарь на 1881 г.

Пользующійся благосклонностью публики, Иллюстрированный Календарь Баумана появится въ октябрѣ, украшенный олеографіей: Счастье Матери. Кромѣ календарныхъ свѣдѣній онъ содержитъ въ себѣ романъ изъ современной русской жизни «Наслѣдство Кесеніи» справочный отдѣлъ, интересныя и полезныя статьи, повѣсти, рассказы, множество практическихъ совѣтовъ, юмористики и проч. Въ красивой папкѣ 1 р., съ перес. 1 р. 30 к., въ переплетѣ съ золотымъ тисненіемъ 1 р. 50 к., съ перес. 1 р. 80 коп. Для подписчиковъ на «Неву» или Вѣстникъ 75 к., въ переплетѣ 1 р. 20 к.; съ пересылк.: въ папкѣ 1 р., въ переплетѣ 1 р. 50 к.

Требованія адресовать: въ контору журнала «Нева», Исаакіевская площадь, № 6, на углу Большой Морской, въ Петербургѣ, или въ Москву, въ центральную контору объявленій для всѣхъ европейскихъ газетъ (Л. Метцль) Петровка, домъ Солодовникова.

4—6 (5)